ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8

ք. Երևան «28» 12 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն՝ Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 15.12.2022թ. N 1965-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<Կիլիկիա>> մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 4 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6 667 700 (վեց միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30 %-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողին բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարը տրամադրվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների չափով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա

կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման հաշվետվության ներկայացման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011041143
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

-------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

____________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
28.12.2022 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	71351540/144	ՀՀ դրամ	6 667 700	1	ք. Երևան	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

1	**Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ **խորհրդատվական** ծառայության մատուցում՝ <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը** **«Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Կիլիկիա» մարզադահլիճի շենքի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցում՝ համաձայն ծավալաթերթ-նախահաշվի:**
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Ամենօրյա հսկողության իրականացում՝ պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուրն իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, **ամենամսյա** հաշվետվությունների ներկայացում: Հաշվետվությունները պետք է ներկայացվեն ոչ ուշ քան շինարարական աշխատանքները սկսելու օրվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա մինչև ամսի 5-ը: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը

	մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:	
	1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ: 2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում: 3. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:	
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում	
	Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն կապալառուի/շինարարական կազմակերպության/ շինարարական աշխատանքներ իրականացնելու անկարողության մասին՝ նշելով չաշխատած օրերի քանակը, դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են:	
	Ծառայության մատուցման ժամկետը	
	Սկիզբը	Ավարտը
	շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համար կնքված պայմանագրերից /համաձայնագրերից/ վերջինի ուժի մեջ օրվան հաջորդող օրը	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011041143
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
28. 12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/144	«Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Կիլիկիա» մարզադահլիճի շենքի հիմնանորոգում աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3 147 000	3 147 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011041143
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
28.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
28.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
28.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 գնման պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

Աղյուսակ N1

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն շահագործման ժամկետ /տարի/
1	2	3
	Ճարտարապետաշինարարական նյութեր	
1	Բազալտե սալեր 30մմ հաստությամբ	5
2	Տրավերտինե սալեր 40մմ հաստությամբ	5
3	Տանիքի ջրամեկուսիչ ծածկույթի իրականացում, 1 շերտ Primer, 1 ստորին շերտ, 1 վերին շերտ, գռանուլապատ	10
4	Ջերմամեկուսիչ՝ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալեր 60մմ հաստությամբ	50
5	Ջերմամեկուսիչ՝ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալեր 100մմ հաստությամբ	50
6	Սենդվիչ պանել	20
7	Տանիքածածկ բիտումային SBS	40
8	Գորգածածկույթով հատակներ 8.5 մմ	5
9	Վինիլային հատակներ 6.2 մմ	5
10	Պրեսգրանիտե սալիկներ	5
11	Լատեքսային ներկ	5
12	Ջրաէմուլսիոն ներկ	5
13	Ապակեպատ վիտրաժ, M1 համակարգ, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակե փաթեթը 6մմ մոխրագույն կոփված+20+6մմ մոխրագույն կոփված, չբացվող մաս	5
14	M1 համակարգով ապակեպատ վիտրաժի ուղղահայաց բացվող փեղկեր էլեկտրական մեխանիզմով (14 հատ), RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակե փաթեթը 6մմ մոխրագույն կոփված+20+6մմ մոխրագույն կոփված	5
15	Ներքին ապակեպատ վիտրաժի բացվող դռներ ալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը 12մմ տրիպլեքս, թափանցիկ, կոփված +20+6մմ թափանցիկ	5
16	Ներքին ապակեպատ վիտրաժի չբացվող մասեր ալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը 12մմ տրիպլեքս, թափանցիկ, կոփված +20+6մմ թափանցիկ	5
17	Պատուհաններ, թերմոալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, բացվող, ապակեփաթեթը թափանցիկ	5
18	Բարդ փական թերմոալյումինե փեղկի համար	5
19	Արտաքին ապակեպատ վիտրաժի բացվող դռներ, թերմոալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը թափանցիկ	5
20	Արտաքին ապակեպատ վիտրաժի վերնափեղկ և չբացվող մասերեր, թերմոալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, ապակեփաթեթը թափանցիկ	5
21	Արտաքին խուլ դռներ, թերմոալյումինե, RAL7012mat գործարանային փոշեներկումով, լամբիրապատ, ջերմամեկուսացված	5
	Սանտեխնիկական պատրաստվածքներ	
22	Լվացարան սիֆոնով	1
23	Զուգարանային կոնք	1
	Էլեկտրատեխնիկական նյութեր և պատրաստվածքներ	
24	Լուսադիոդային լուսատուներ	1

25	Ավտոմատ անջատիչներ, բահանակներ, վարդակներ	1
	Հրդեհի ահազանգման համակարգ	
26	Ընդունիչ-հսկիչ սարք R3-Рубеж-2ОП կամ համարժեք	1
27	Ինդիկացիայի և ղեկավարման բլոկ R3-Рубеж-БИУ կամ համարժեք	1
28	ԱԻՆ միանալու վահանակ, Контакт-GSM կամ համարժեք	1
29	Հասցեային պահուստային սնուցման սարք 12Վ 5Ա 2 հատ 12Վ12Ա մարտկոցի համար նախատեսված ИВЭПР 12/5 RS-R3 2X12 БР կամ համարժեք	1
30	Մարտկոց Аккумулятор 12В12А կամ համարժեք	1
31	Հասցեային ծխի ազդասարք ИП 212-64-R3 W1.02 կամ համարժեք	1
32	Հասցեային հրդեհի ձեռքի ազդարարիչ ИПР 513-11-A-R3 կամ համարժեք	1
33	Հասցեային լուսաձայնային ազդարարիչ ОПОП 124-R3 կամ համարժեք	1
34	Հասցեային ծխի գծային ազդասարք ИПДЛ–264/1-50-R3 (ИП 212-264) կամ համարժեք	1
	Տեսահսկման համակարգ	
35	Կոշտ սկավառակ 4SP ST4000VX000-520 կամ համարժեք	1
	Մոնիտոր LED 32" Hikvision DS-D5032QE կամ համարժեք	1
	Բարեկարգման նյութեր	
36	Ասֆալտաբետոն	5
37	Բազալտե եզրաքարեր 300x150մմ	5

Աղյուսակ N 2

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ.մ	Քանակ	Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում		
				Կապալառուի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել
1	2	3	4	6	7	8
	Օդափոխություն					
1	Կանալային օդամուղ իր պտուտաթվերի կարգավորիչով L=3000 մ3/ժ, H=400 Պա AC Smart Air VKCA 600x350 2.5Kw 4L3 կամ համարժեք	կոմպլ.	2.0	6 ամիս	AC Smart Air	VKCA 600x350
2	Կանալային օդամուղ կլոր կտրվածքով, իր պտուտաթվերի կարգավորիչով L=600 մ3/ժ, H= 180 Պա AC Smart Air CDF160L կամ համարժեք	կոմպլ.	2.0	6 ամիս	AC Smart Air	CDF160L
3	Կանալային օդամուղ կլոր կտրվածքով, իր պտուտաթվերի կարգավորիչով L=360 մ3/ժ, H= 150 Պա AC Smart Air CDF125L կամ համարժեք	կոմպլ.	1.0	6 ամիս	AC Smart Air	CDF125L
4	Առաստաղային օդամուղ AWENTA 125 կամ համարժեք	հատ	2.0	6 ամիս	AWENTA	125
5	Սպլիտ օդորակիչ (ինվերտորային) Gree կամ համարժեք MUSE GWH12AFC-K6DNA1F+GWH12AFC- K6DNA2F/O (LCLH) R32 կամ համարժեք	հատ	3.0	1 տարի	Gree	MUSE GWH12AFC-K6DNA1F+GWH 12AFC-K6DNA2F/O (LCLH) R32
6	Gree U-MATCH համակարգի արտաքին սարք Gree GUD160W/A-X կամ համարժեք	հատ	8.0	1 տարի	Gree	GUD160W/A-X
7	Gree U-MATCH համակարգի արտաքին սարք Gree GUD85W1/NhA-S կամ համարժեք	հատ	2.0	1 տարի	Gree	GUD85W1/Nh A-S

8	Gree U-MATCH համակարգի արտաքին սարք Gree GUD71W1/NhA-S կամ համարժեք	հատ	1.0	1 տարի	Gree	GUD71W1/NhA-S
9	Gree U-MATCH համակարգի ներքին սարք (կանալային) 54500 Btu/h Gree GUD160 PH/AS կամ համարժեք	հատ	8.0	1 տարի	Gree	GUD160 PH/AS
10	Gree U-MATCH համակարգի ներքին սարք (կանալային) 29000 Btu/h Gree GUD85PHS1/A-S կամ համարժեք	հատ	2.0	1 տարի	Gree	GUD85PHS1/A-S
11	Gree U-MATCH համակարգի ներքին սարք (կանալային) 23800 Btu/h Gree GUD71PHS1/A-S կամ համարժեք	հատ	1.0	1 տարի	Gree	GUD71PHS1/A-S
	Տեսահսկման համակարգ					
12	Ստացիոնար IP 4MP տեսախցիկ ներսի օգտագործման Hikvision DS-2CD1343G0-I կամ համարժեք	հատ	13.0	1 տարի	Hikvision	DS-2CD1343G0-I
13	Ստացիոնար IP 4MP տեսախցիկ դրսի օգտագործման Hikvision DS-2CD1043G0-I կամ համարժեք	հատ	11.0	1 տարի	Hikvision	DS-2CD1043G0-I
14	PoE ցանցային սվիչ 24 մուտք 10/100ՄԲ + 2 մուտք/ելք 1000ՄԲ Hikvision DS-3E0326P-E(B) կամ համարժեք	հատ	1.0	1 տարի	Hikvision	DS-3E0326P-E(B)
15	Ցանցային տեսագրող սարք 32 IP մուտք, 2 կոշտ սկավառակի միացման ունակությամբ Hikvision DS-7632NI-K2 կամ համարժեք	հատ	1.0	1 տարի	Hikvision	DS-7632NI-K2

սարքավորումները ենթակա չեն փոփոխության շին-մոնտաժային աշխատանքների ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, որ Կապալառուի կողմից ներկայացվում են հիմնավորումներ, որ արտադրող ընկերությունը պայմանագիր կնքելուց հետո դադարեցրել է իր գործունեությունը տվյալ մոդելի արտադրությունը (երկու դեպքում էլ հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պարագայում):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011041143
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Մ. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

(ստորագրություն) Ա. Վարդանյան

Կ.Տ.

ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «28» 12 2022թ.**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն Ալեքսանդր Վարդանյանի, անձ. AU06103228,
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

տրվ. 011 կողմից, 02.02.2022թ. որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վա՛վերապայմանները՝

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք.Երևան, Կորյունի 19ա
ընկերության հասցեն

Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

հ/հ 1150009355815863
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 01528652
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Ա.Վարդանյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ.

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ Շինսերտիֆիկատ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ h/h 1150009355815863

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01528652

8. Վճարողի ՀՇՁ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

10. Շահառուի ՀՇՁ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 352 070 (Երեք հարյուր հիսուներկու հազար յոթանասուն)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ և AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարմանապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները՝
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

№ 8227-02
«27» 12 2022թ.

Բանկային երաշխիք
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք կամ կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 պայմանագրով նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ, (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 3,147,000 (երեք միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 30.08.2023թ.-ը:

6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ բանկում սպասարկվող թիվ 1150009355815863 հաշվարկային հաշվին:

7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

կամ

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեում գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Նալբանդյան 48: Հեռ.՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00: Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, 0010, Налбандян 48, Тел: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www@armbusinessbank.am
Address: Armenia, Yerevan, 0010, 48 Nalbandyan Street; Tel: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Website: www@armbusinessbank.am

անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:

15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:

16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

Կորպորատիվ բիզնեսի կառավարման
դեպարտամենտի Տնօրեն՝ Հ. Ցանկասարդյան

Ֆինանսական տնօրեն –
Գլխավոր հաշվապահ՝ Դ. Եդիգարյան

№ 8226-02
«27» 12 2022թ.

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝բենեֆիցիար) և Շինսերտիֆիկատ ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **314,700 (երեք հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, բայց ոչ ուշ քան 01.12.2024թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-22/8պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ բիզնեսի կառավարման
դեպարտամենտի Տնօրեն՝ Հ. Նավասարդյան

Ֆինանսական տնօրեն –
Գլխավոր հաշվապահ՝ Դ. Երիցարյան